



16:51 27/09/2011 » Կրթություն

Այս տարի լրանում է Ամերիկյան Համալսարանի հիմնադրման 20 ամյակը

Հայաստանում Ամերիկյան համալսարանի հիմնադրման հիմնական գրավականը 1988թ-ի երկրաշարժից հետո ՀՀ կրթական համակարգին աջակցելն էր: Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) քսանամյակի կապակցությամբ տեղի ունեցած ասուլիսում այն մասին նշեց ՀԱՀ հիմնադիր և պատվավոր նախագահ Միհրան Աղբաբյանը:

«Կալիֆորնիայի համալսարանի անձնակազմի կողմից կատարված բազում ուսումնասիրություններից հետո ակնհայտ դարձավ, որ Հայաստանում Ամերիկյան համալսարանի հիմնումը լավ գաղափար է, առավել ևս, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում ամերիկյան ազդեցությունը զորավոր չէր», - նշեց ՀԱՀ հիմնադիրը:

Ասուլիսին ներկա ՀԱՀ հիմնադիր ղեկավար Արմեն Տեր-Կյուրեղյանը իր հերթին փաստեց, որ անցած քսան տարիների ընթացքում ՀԱՀ-ը բեղուն գործունեություն է ծավալել:

«Ունենք 2000-ից շատ շրջանավարտներ, որոնց ներդրումը երկրի զարգացման գործում շատ կարևոր է: Նրանց 75-80 տոկոսը ապրում և աշխատում է Հայաստանում, մի մասը զբաղված է գիտական ուսումնական փոխանակման ծրագրերով, մի մասն էլ ներկայացնում է Հայաստանը միջազգային կազմակերպություններում», - իր հերթին նշեց Արմեն Տեր-Կյուրեղյանը:

ՀԱՀ ներկայիս ղեկավար Բրյուս Պողոսյանը իր հերթին նշեց, որ ներկայումս մշակվում է ՀԱՀ-ի ռազմավարական ծրագիրը, ըստ որի 2012 ուսումնական տարվանից համալսարանը կունենա նաև բակալավրի կրթական ծրագիր:

Անդրադառնալով ՀԱՀ-ի գործունեության կարևորությանը՝ Արմեն Տեր-Կյուրեղյանը ընդգծեց, որ համալսարանում ուսաման տարիներին, բացի գիտելիքներից շրջանավարտները ծանոթանում են նաև Արևմտյան մոտեցումներին, ինչը, ըստ ՀԱՀ հիմնադիր ղեկավարի, իրենց օգնում է հետագա գործունեության ընթացքում: